ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 26
վարչական տուգանք նշանակելու մասին

24 հունվարի 2019թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար Էդգար Ճաղարյանս, քննելով անհատ ձեռնարկատեր Սեյրան Ղազարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2018 թվականի հոկտեմբերի 26-ի N 554 հանձնարարագրի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Սեյրան Ղազարյանի մոտ իրականացված ստուգման արդյունքում պարզվել և 2018 թվականի դեկտեմբերի 20-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ արձանագրվել է այն փաստը, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են **ՀՀ կառավարության 2011թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշման հավելվածի** 39-**րդ կետի** 2-**րդ ենթակետի և** 55-**րդ կետերի** պահանջները. այն է՝

- բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ կառուցված չեն հիգիենայի պահանջները բավարարող նյութերից և չեն պահվում նորոգ ու բարվոք վիճակում.
- սննդի շղթայում ներգրավված աշխատակիցներ՝ Սեյրան Ղազարյանը, Գագիկ Գասպարյանը, Ռիտա Հովսեփյանը և Ժենիկ Էվինյանը ենթարկված չէին պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննությունների:

Այսպիսով, հաստատվել է, որ սույն վարչական գործով առաջացած իրավախախտման համար պատասխանատու է անհատ ձեռնարկատեր Սեյրան Ղազարյանը (հասցե՝ Տավուշի մարզ, գ.Կոթի, փ.22, տ.3): Սեյրան Ղազարյանը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցվել է, սակայն գործի քննությանը չի ներկայացել և միջնորդություն չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու մասին: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցել է անհատ ձեռնարկատեր Սեյրան Ղազարյանի կողմից լիազորված անձ Ռուդիկ Արտավազդի Գանջալյանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի** 14-**րդ,** 238[2]-**րդ**, 279-**րդ**, 281-**րդ հոդվածներով՝** 188-**րդ հոդվածի** 1-**ին մասով՝**

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Սեյրան Ղազարյանի նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Տուգանքը վճարել թիվ 900005242822 գանձապետական հաշվին, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի** 305-**րդ հոդվածի** համաձայն՝ որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանքի վճարումն ապացուցող բանկային անդորրագրի պատճենը սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի իրավաբանական վարչություն:

3. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է՝ համաձայն **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի** 88-**րդ հոդվածի**:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի** 71-**րդ հոդվածի** 1-**ին մասի «ա» կետով** սահմանված ժամկետում (երկու ամսվա ընթացքում):

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 25.01.2019 11:06:53 GMT+4

Signed by: TSHAGHARYAN EDGAR 3205840232 **Է. ՃԱՂԱՐՅԱՆ**

Կ.Տ.